ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահի գրությունը, ղեկավարվելով ‹‹Գույքահարկի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, 1 Եկմալյան 6 հասցեում գտնվող շինության նկատմամբ սահմանել գույքահարկի գծով արտոնություն՝ 695.000 /վեց հարյուր իննսունհինգ հազար/ դրամ գումարի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, 1 Եկմալյան 6 հասցեում գտնվող շինության ընթացիկ 2017 թվականի գույքահարկի հաշվարկային գումարը կազմում է 695.000 /վեց հարյուր իննսունհինգ հազար/ դրամ, որի համար 06.02.2017թ. գրությամբ դիմել է՝ օրենքով սահմանված կարգով գույքահարկի գծով արտոնություն ստանալու խնդրանքով:

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2000 թվականի ապրիլին՝ երեխաների և տարեցների շրջանում մուրացկանության և չքավորության տարածման դեմ պայքարելու առաքելությամբ: Տասնյոթ տարիների իր գործունեության ընթացքում «Օրրանը» կարողացել է օգնել հազարավոր մարդկանց: Այսօր «Օրրանը» ունի երկու կենտրոն՝ Երևանում և Վանաձորում, ուր հաճախում են շուրջ 275 կարիքավոր երեխա և 80 միայնակ տարեց, որոնք օգտվում են կազմակերպության կողմից մատուցվող ամենօրյա տաք սննդի, կրթական, հոգեբանական, բժշկական, սոցիալական և մշակութային համալիր ծառայություններից:

Հատկանշական է այն փաստը, որ կազմակերպության կողմից հաշվարկված գույքահարկի գծով հարկային պարտավորությունները մարելու դեպքում, նկատելի ձևով կավելանա երեխաներին և տարեցներին ցուցաբերվող օժանդակությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից մշտապես իրականացվող բարեգործական գործունեությունը՝ առաջարկվում է կազմակերպությանը տրամադրել 695.000 /վեց հարյուր իննսունհինգ հազար դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, 1 Եկմալյան 6 հասցեում գտնվող շինության ընթացիկ 2017 թվականի գույքահարկի հաշվարկային գումարը կազմում է 695.000 /վեց հարյուր իննսունհինգ հազար/ դրամ, որի համար 06.02.2017թ. գրությամբ դիմել է օրենքով սահմանված կարգով գույքահարկի գծով արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահի գրությունը՝ գույքահարկի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպության կողմից երեխաներին և տարեցներին մշտապես ցուցաբերվող օժանդակությունը, նպատակահարմար եմ գտնում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրել 695.000 /վեց հարյուր իննսունհինգ հազար/ դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առընչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

**«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ